Ա Ռ Ա Ր Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ն Ե Ր

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 3-Ի ԹԻՎ ԹԻՎ 100-Ա ԵՎ 102-Լ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Թիվ 100-Ա որոշման վերնագրում և 2-րդ կետում «նախկին» բառը գրառելու անհրաժեշտություն չկա։

Որոշման նախաբանում անհրաժեշտ է հղում կատարել նաև «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի դրույթին: Բացի այդ, որոշման 1-ին կետում կատարված հղումը որոշման նախաբանում արդեն իսկ գրառված է։

Թիվ 102-Լ որոշման հերթական համարի դիմաց գրառված է «N» նշանը, իսկ որոշմամբ հաստատված հավելվածի վերևի աջ անկյունում՝ «թիվ» բառը: Բացի այդ, հավելվածի 58-րդ կետը գրառելու անհրաժեշտություն չկա։

Կատարող՝ Նաիրա Մարտիրոսյան
23.06.2022թ.